

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 17-ին (սեպտեմբեր ամսվա ընդունելության փոխարեն) ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը մարզկենտրոնում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 101 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր յոթանասունինը, աշխատանքի տեղավորման միջնորդության համար՝ քսան, բնակարանի հատկացման, հայրական տունը ժառանգելու խնդրանքով՝ մեկական քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից յոթանասունութին տրվել է դրական լուծում, մեկ դիմում գտնվում է ուսումնասիրման փուլում:

Ընթացք է տրվել աշխատանքի տեղավորման մասին երկու դիմումի, տասնութ դիմումներ վերցվել են հաշվառման և ուսումնասիրվում են դրանց լուծման հնարավորությունները:

Բավարարվել է բնակարան հատկացնելու մասին մեկ դիմումատուի խնդրանքը:

Աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումում ուսումնասիրման ընթացքի մեջ է գտնվում հայրական տան ժառանգության մասին դիմումը:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ